

# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԻՆ

ԱՄՍՈՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

Անցեալ զեկու, ամսոյ 1-27 օրերու ընթացքին Ս. Ամսոռյա Տնօրէն Ժաղովը ի նիստ գումարուեցաւ տանեամէկ անդամներ, գլխաւորաբար զրագելով Ս. Յարութիեան տաճարի վերանորոգութիւննեան կենսական և զժուարին խնդրով, իսկ Կրօնական Աթեանը երկու անգամ:

● Եր. 2 գեկտ. — Ս. Պատրիարքը, որ երեք օրերէ ի վեր Յոպէց էր, այսօր վերադարձաւ Երուազէմ, ընկերակցութեամբ Տ. Ներսէս Վրդիկ և Տ. Եղիչէ արեղայի:

● Կիր 3 գեկտ. — Ս. Պատրիարքը Քարոզեց Ս. Յակոբիանց մայր տաճարին մէջ, բնաբան առնելով ուսւա՛մեզ կալ յազօթաւ Խօսքը, բացատրեց թէ աղօթքին զգացումը կամ աղօթելու իդը Հոգեկան չափահասութեան ժամը կը ցուցնէ մարդուն մէջ, վասնզի Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ լինելու տեհնէն ամենէն բնարոշիչ նշանն է բարոյական կեանքի:

— Որովհետեւ երկու տարի առաջ զեկու 1ին էր որ՝ Ն. Ամենապատուութիւնը սկսաւ պատրիարքական պաշտօնին, այսօր, ըստ սովորութեան, սեղի ունեցան գահակալութեան երրորդ տարեգործի առթիւ վանական ներքին հանդիսութիւնները: Ս. Պատարագի աւարտումէն վերջ, Ս. Պատրիարքը Միաբանութեան թափօրով առաջնորդուեցաւ պատրիարքական մեծ զահիճը, որ հաւաքուած էր ժողովուրդը Լուսաւարապետ Տ. Միերապ սրբազնը՝ յանուն Միաբանութեան, և ինձայարանի և ժառանգաւորաց Տեսուչ Տ. Տիրան վրդ. յանուն ուսանողութեան սրտառուչ ուղերձներ ըրին այս առթիւ, ժառանգաւորները երգեցին, սիրուն ուղերձներ և արտասանութիւն մը ըրին նաև Ս. Թարգմանչաց Վարժարանի առներէն տղեկ մը և աղջնակ մը: Ս. Պատրիարքը ամենուն պատասխանեց զգածուած սրտով և մաղթանքներ ըրաւ աղդին և Ամսոռյան համար:

Երեկոյին միեւնոյն տոմիով հանդիսական Ընթրիք տեղի ունեցաւ վանքի մեծ սեղանատան մէջ, մասնակցութեամբ բոլոր Միաբանութեան, աշակերտութեան եւ պաշտօնէից: Ներկայ էին նաեւ քաղաքի ժողովուրդէն կարգ մը յարգելի աղդայիններ: Հոս ալ ուղերձներ ըրին նոյնպէս Տ. Մկրտիչ Աղաւնուանի և Տ. Միրատ սրբազններ Տ. Նորայր վրդ. և Տօքթ. Գալուքիան, որոնց ամենուն Ս. Պատրիարքը պատասխանեց շնորհակալութեամբ:

● Բ. 4. գեկտ. — Բատ հին տոմարի Ս. Կուսափ ընծայման տանին առթիւ, Միաբանութիւնը հանդիսական թափորով գնաց Դիմումանի, զըլիխաւորութեամբ Տ. Միրատ սրբազնի, որ և պատարագի Աստուծամօր գերեցմանին վրայ եւ քարոզեց՝ ինքոյնք հաւատարով և զործքով Աստուծոյ ընծայելու քրիստոնէական պատահանութեան վրայ, մասնաւորաբաէս շեշտելով թէ իրապէս Աստուծոյ նուիրած կ'ըլլանք ինքզինք-

նիս, երբ ունենանք կարօտեալներուն հանդէս անձնութեամբ վարք մը:

● Ուր. 8 գեկտ. — Ա. Քաղաքիս կաթողիկէ հայոց պատրիարքանը ի նիստ գումարութեամբ մը Պատրիարքանիս ծանուցուած ըւլւալով Գերեբը, Արքիարեան պատրիարքի ժամանումն ի Ս. Քաղաք, այսօր Ս. Պատրիարք հօր կողմէ Ն. Սրբազնութեամ այցելեց փոխանորդ Տ. Մկրտիչ սրբազնանի, ընկերակցութեամբ Տ. Մկրտիչ եւ Տ. Շաւարչ վարդապէտներու:

● Եր. 9 գեկտ. — Գերեբչանիկ Տ. Արքիարեան սրբազնն, այսօր, ընկերակցութեամբ տեղայու իր փոխանորդին և չըրս վրդպաց, այցելեց Ամեն, սրբազն Պատրիարք Հօր, որ ընկերակցութեամբ Տ. Մերոսպ եւ Տ. Մկրտիչ սրբազնաներու և վեց վարդապէտներու պատուով ընդունեց համազգի բոյր հասարակութեան հոգեւոր պէտուը:

— Կէսօրէ վերջ, Սրբազնն պատրիարքը, ընկերակցութեամբ Տ. Միրատ սրբազնի և Տ. Նորայր և Տ. Սիրու վարդապէտներու, փոխադարձ այցելութեան գնաց Գերեբը: Տ. Արքիարեան Սրբազնի:

● Կիր. 10 գեկտ. — Ա. պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբուն տաճարի մեծ վերնայարի մատուուին մէջ Քարոզեց Տ. Շաւարչ վրդ. որ բնաբան առնելով Յովաննու Աւետարանէն Ժ. 29ի Ասէին որոտումն լինել, կէսքն ասէին Հըբատակ խօսեցաւ բառերը. խօսեցաւ կը բոլոնի և դիտութեան ներքին առնչութեան վըրայ. Դանոնք ներկայացնելով իրեւու ոչ թէ հակառակ այլ վիրար լրացնող գաղափարաց դրսիներ. բացատրեց թէ հոգուով արթուռ մարդը ամէն իրողութեան և երեւոյթի մէջ պէտք է կարենայ տեսնել ոչ միայն բնութեան վիճակ մը լոկ, այլ նաեւ աստուածային յայտնութեան նըշան մը:

● Ք. 13 գեկտ. — Ս. Պատրիարքը, ընկերակցութեամբ Տ. Միրատ սրբազնի եւ եօթը վարդապէտներու, այսօր, մեծ արտօնի վրայ կատարեց հիմնարկէքի օրնութեամբ վեց նոր մթերանցներու, որոնք կը շնորհին գլխաւորաբար միաբանց գումարներով, եւ որոնք յետ անոնց մահան, ըստ օրինի կը զառնան սեպհականութիւն Ս. Ամսոռյան:

● Եշ. 14 գեկտ. — Ս. Պատրիարքը, ընկերակցութեամբ Տ. Միերապ սրբազնի, Տ. Եղիչէ արեղայի և գիւտանապետ Պ. կ. Նուրեբանի, այսօր գնաց Յոպէց, կալուածական գործի մը ընսութեան համար, եւ վերադարձաւ երեկոյին:

● Կիր. 17 գեկտ. — Ս. Յակոբեանց Մայր տաճարին մէջ Քարոզեց Տ. Կիւրեղի վրդ. օրուան Աւետարանէն, (Ղուկ. Ժ. 1-9) առնուած մտածուի մը վրայ, և բացատրեց թէ զէպքերու կամ արկածներու դու գացած կեանքերէն պէտք է կարենալ հանել միշտ բարոյական գասեր, զըլիխաւորաբար կեանքի անկայունութեան մեծ զարդ, եւ ըստ այնմ առաքինական գործերով եւ սրտագին պաշշարաբութեամբ որ և է ատեն պատրաստ գտնուի ընդունելու աստուածային կամքին կատարումը:

● Բ. 18 գեկտ. — Յանուն Ս. Պատրիարքին, այսօր, Տ. Գէորգ եւ Տ. Կիւրեղ վարդապետներ եւ Պ. Կ. Հուրեան ներկայ գտնուեցան յօւղարկաւորութեանը՝ մեծ յարգանդ վայելող անդիմացի ընդհանուր դատախազին, որ ինքնաշարժի մը արկածին զոհ գացած էր երեկ:

● Ե. 21 գեկտ. — Ըստ սովորութեան Հարց Եգիպտացւոց տօնին առթիւ, այսօր Ս. Պատրիարք մատուցուցաւ Ս. Գլխադրի յարակից փաքրիկ մատուցին մէջ, որ նուրբուած է Ս. Մակարայ, եգիպտացի մեծ ճգնաւորին, որ ապա եղած է Հայրապետ Երուսալէմի: Այս մատուցը ազգային զգացման տեսակէտով կրկնապէս նշանակալից է մեր համար, զի հոս թաղուած է ի վաղուց անտի Ս. Լուսաւորչի նշանարկն մատունք մը. և յետոյ այս նուրբական խցիկին մէջ է որ եկեղեցական պաշտամունքի ատեն ընդհանրապէս աղօթած են, իրենց ի Ս. Քաղաքա աքսորանց միջոցին, Խրիմեան Հայրիկ և կըմիրլեան սրբազնա:

— Սպանիական նոր հիւպատոս, Պ. Փողէ Անթօնիո Պալին քանա այսօր, ընկերակցութեամբ փոխ-հիւպատոսին, առաջին այցելութինը տըւաւ Ս. Պատրիարք հօր:

● Ռ. 22 գեկտ. — Ս. Կոյսին յըւթեան տօնին առթիւ, հանդիսաւոր ՀՀրաշապիառ կատարուեցաւ ի Գեթօնմանի, նախագահութեամբ Ս. Պատրիարք հօր, որ եւ քարոզեց ըստ աւուրն պատշաճի: Ս. Կուսին յըւթեան և Փըհին ձընդեան տօներուն միջեւ ցոյց տուաւ տամարական և հոգեկան յարաբերութիւններ, մասնաւորաբ շեշտեց այն կէտը թէ Ս. Կոյսին յըդութիւնը առաջին պահն է փրկագործութեան ծրագրին գործադրութեան, ըստ որում մաքուր ուխտի մը ձնունդը միայն պիտի կրնար Ըլլաւ միջնորդ մեծ նոպատակի մը իրականացման: բացատրեց հաւատքի սերնդագործման անսահման գերազանցութիւնը մարմնական սերնդագործութեան վրայ, առաջինին մէջ մանաւանդ ցուցնելով բարոյական մեծութեանց սկիզբը:

● Ռ. 23 գեկտ. — Ս. Պատրիարքը, ընկերակցութեամբ զիւանապետ Պ. Կ. Հուրեանի, փոխադարձեց սպանիական նոր հիւպատոսին այցելութիւնը:

— Երեկոյին, ընծայարանի սրահին մէջ բաշխուոնց Տ. Շաւարչ վրդ. նիւթն էր Քանդի բարոյականը:

● Կիր. 24 գեկտ. — Ս. Պատրիարքը, առաւտուն կանուու Ցոպուտ մեկնեցաւ, Տ. Սմբատ սրբազնի և Տ. Սերովիկ վարդապետի ընկերակցութեամբ, տեղույն Ս. Նիկոլայոս եկեղեցիին տօնախմբութեան առթիւ: Տ. Սերովիկ վրդ. պատարագեց, իսկ Ն. Ամենապատառութիւնը քարոզեց ըստ աւուրն պատշաճի: Ս. Պատրիարքը, Տ. Սմբատ որբազան, Տ. Ներսէս, Տ. Ցակոր և Սերովիկ վարդապետներ ցերեկի ճաշի պատառասիրութիւնը ընդունեցին տեղույն երեւելի աղդայիններէն Պ. Խաչատուր Թագէոսսեանի տան մէջ:

— Երուսալէմի մէջ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան տաճարի մեր վերնայարկ մատուռը, ուր քարոզեց Տ. Տիրան վրդ., օրուան

Աւետարանի կոչունքի առակէն ներչնչուած՝ բացատրիկ թէ քրիստոնեան ինչպէս պէտք է, առանց որ և է պատճառի կամ պատրուակի, պատրաստ գտնուի միշտ կտտարելու աստուածային օրէնքներէ իրեն համար սահմանադրուած կրօնական եւ բարոյական պարտականութիւնները կատարելու:


● Բ. 25 գեկտ. — Ս. Ծննդեան Լատինաց տօնին առթիւ Ս. Տեղեաց քարտուղար Տ. Շաւարչ վրդ. եւ աւագ թարգման Տ. Հայրիկ վրդ. թէթղենէմ գացին ըստ սովորութեան, ի պարտաւորութիւնէ:

— Երեկոյին, Պատրիարքաբարանի մէջ գումարուեցաւ կրօնական ատեանը. նիստի միջոցին, տեղույթ Palestine Postի հասած հեռագրական լուրէ մը իմացուեցաւ Ամերիկայի Առաջնորդ Տ. Ղեւոնդ Ս. Արքեպիսկոպոսի չարաղէտ մահուան կոկտալի գոյմը, որ սրտակեղեք տպառութիւն գործեց Ս. Պատրիարքին և ժողովական համար վրայ: Ն. Ա., յոյժ զգածուած: Հոգուց արտասանեց ի նշան յարգանց և սիրուառ հանգուեցեալն, նիստը փակուեցաւ:

● Գ. 26 գեկտ. — Ս. Պատրիարքը, ընկերակցութեամբ լուսարաբապետ Տ. Մերուց և պատրիարքական փախանորդ Տ. Մկրտիչ Սրբապաններու և ութիւն վարդապետաց, Ս. Ծննդեան չնորհաւութեան այցելութիւն տօւաւ Լատին Պատրիարքաբարանը, Ֆրանչիսկեան Միարանութեան և Անկիքան Եպիսկոպոսարանը. իսկ Փօխանուրդ որբարանը, ընկերակցութեամբ չորս վարդապետներու, կէսօրէն առաջ և յետոյ այցելեց կաթոլիկ հայ և միւս հասարակութեանց և Միարանութեանց:

Այն տեղ ձննդեան մազթանքներուն խառնուեցան ցաւակցութիւն և տիրազգած արտայայտութիւններ՝ Հանգ. Ղեւոնդ Սրբապանի մահուան համար:

● 28 գեկտ. — Ամերիկահանայոց Կեղը, Վարչութեան ատենապետ Տ. Մամրէ Ծ. վարդապետէ այսօր ստացուած երեկուան հեռագիրէ մը զարհութեանով տեղեկացանք թէ տարաբախտ Մըրազանի սպանութիւնը տեղի ունեցած է պատրագած միջոցինք:



## ՆՈՒԻ ԻՐԱՍՏՈՒԽՈՒԹԻՒՆՆԵՐ

Յնորհակալուրեամբ կ'արձանագրենք նետեւեալ բարեպատկան նուեւները:

Մեծ նոր Գիւղացի Այրի Տիկին Մարիամ Զիյեանէ, Լիւս Պատ. 1: — Մեծ նոր Գիւղացի Այրի Տիկին Խանահիկ Պէտուեանէ մատաղային, Լիւս Պատ. 1 է 300 միլի: — Մայկարացի Տիկա Ստեփան Բանիկեաննէ (Եթուաղէմ) Լիւս Պատ. 3: — Աղեմանդրիային Տիկին Պարկետունի ձերինեանէ Լիւս Եզիոյ. 1: — Անքարի Ենթէններ (Եթանա) Արք. Տ. Ցակոր Բանանայ Պօյսնեանէ, Յանմ 10: — Երևասակէն Օր. Խեանուի Շէօնմէլեանէ Սարկաւոցաց չորս օտպիկի: — Երևասակէմն Տիգրանակերցի Տիկին Թագուհի Գաւասազրեանէ Ս. Գիւղացի համար ինքնածեռապործ գաւազոյ մը: